ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐՄԻՆԵ ՌԱԶՄԻԿԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ԿԱԶՄԱԽՈՍԱԿԱՆ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ

Ժ. 02. 07 – «ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2015

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ — բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Գ.Ա. Գևորգյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ — բանասիրական գիտությունների դոկտոր, դոցենտ Ա.Հ. Ջիվանյան

բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Մ.Հ. Յաղուբյան

Առաջատար կազմակերպություն՝ — Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու հուլիսի 3-ին, ժամը 12:30-ին, ՀՀ ԲՈՀ-ի՝ ԵՊՀ-ում գործող 009 «Օտար լեզուներ» մասնագիտական խորհրդի նիստում (Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2015թ. հունիսի 2-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
բ.գ.դ., պրոֆեսոր՝ Ե.Լ. Երզնկյան

Դարձվածաբանական գրականության մեջ ԴՄ-ները քննարկվել են տարբեր դիրքերից՝ որպես կայուն այլաբերական միջոցներ (այսպես ասած՝ նեղ ընկալում), որպես իմաստային ու վերնշանային ուրույն հնչերանգ ունեցող արտահայտություններ՝ ասույթ, առակ, այլաբանական իմաստ ունեցող պարբերույթներ և այլն (լայն ընկալում), որպես բառային անսովոր զուգորդումեր՝ իդիոմներ, իմաստային միաձուլության տարբեր աստիճան ունեցող դարձվածային միավորներ, որպես թարգմանական խնդիրներ հարուցող լեզվամշակութային խտացված արտահայտություններ և այլն[1]: Քննարկման նյութ են դարձել դարձվածքների տեսակները՝ կազմախոսական, առասպելաբանական, կրոնածիսական, պատմամշակաթային, միջազգային և այլն: Դարձվածքների մեջ մեծ թիվ են կազմում մարդու մարմնի մասերի անուններով կազմվածները՝ կազմախոսականները, որոնք տարածված են աշխարհի տարբեր լեզուներում: Դրանք մեզ են հասել ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր խոսքով, ազգաբանական դաշտային աշխատանքների և Աստվածաշունչը կազմող սուրբ տեքստերի, ինչպես նաև տարալեզու գեղարվեստական գրականության միջոցով:

Միմյանցից հեռու լեզուներում միևնույն դարձվածքների առկայության փաստը հուշում է, անշուշտ, որ դա հետևանքն է գոյություն ունեցող մի ընդհանուր միտման կամ ուղղորդիչ գործոնի: Տարբեր լեզուներում կազմախոսական ԴՄ-ների՝ միևնույն ակունքին կամ իմաստային միևնույն խմբին պատկանելը որոշելու համար կիրառվել է դարձվածային նույնականացման մեթոդը[2], որը հնարավորություն է ընձեռում ճանաչելու և բնութագրելու միևնույն իմաստային փնջին կամ դարձվածային միևնույն շարքին պատկանող կազմախոսական ԴՄ-ները, որոնց վաղնջականությունը և լայն տարածվածությունը կասկած չեն հարուցում և փաստարկվում են վաղագույն օրինակների առկայությամբ:

Աշխատանքում կարևորվել և առանցքային ու ելակետային են համարվել կազմախոսական ԴՄ-ների հին-արքետիպային և գեղարվեստական ու գեղարվեստական-նորատիպային ձևերի քննարկումները, այսպես ասած՝ հնագույն ու ծիսական արարողությունների, հավատալիքների, ու կրոնական նշանակություն ունեցող հատուկ գործողությունների և դրանց լեզվառճական արտացոլումների փոխակերպումները ժամանակի ընթացքում:

Հարկ է նշել, որ շատ նախնական հավատալիքներ կամ քրիստոնեական հավատքի հետ կապված շատ ծեսեր, արարողություններ ու դրանց հետևանքը հանդիսացող լեզվառճական ձևեր (օրինանք, անեծք, ոգեկանչություն, իմաստախոսություն և այլն, որոնք բոլորն էլ, ի վերջո, լայն առումով, դարձվածքներ են) պատմամշակութային կյանքի զարգացմանը համընթաց, կիրարկվելով քաղաքացիական ու սոցիալական հասարակության տարբեր

[1] Кунин А. В. Английская фразеология (теоретический курс). М., Высшая школа, 1970; Ройзензон С., И., Авалиани Ю. Ю., Современные аспекты изучения фразеологии. СБ. ПФ, Вологда, 1967; Амосова Н. Н., Основы английской фразеологии. Л., изд-во Ленинградского ун-та, 1963; Բաղիկյան Խ. Գ. Դարձվածային ոճաբանություն, Ե., ԵՊՀ, 2000 և ուրիշներ:

[2] Кунин А. В. Английская фразеология (теоретический курс). М., Высшая школа, 1970.

ոլորտներում, ենթարկվել են որոշակի փոխակերպումների, ձեռք բերել նորանոր առնշանակություններ: Ահա այս հայեցակերպից մեկնարկելով՝ աշխատանքում **ուսումնասիրության առարկա** են դարձել դարձվածքների, իբրև լեզվամշակութային խտացումների մասին քննարկումները, դարձվածքների ընկալման տեսական հիմունքները, մասնավորապես՝ դարձվածքների բնորոշման նեղ և լայն տեսակետները, լեզվական, բանասիրական, ազգագրական ու լեզվամշակութային ուսումնասիրությունների մեջ առաջ քաշված այն դիտարկումները, որոնցում բացահայտվում են լեզվի և վաղնջական հավատալիքների, առասպելական ու կրոնածիսական պատկերացումների և մշակութային կյանքի միջև եղած պատճառակցական կապերը: Կարևորվել է հանրալեզվաբանական բնույթի ողջ տեղեկույթը, որը թույլ է տալիս ճանաչել ու բնութագրել դարձքվածքներն՝ ընդհանրապես, և կազմախոսական դարձվածքները՝ մասնավորապես:

Թեմայի **արդիականությունը** պայմանավորված է, նախ, դարձվածքների ուսումնասիրության նկատմամբ համընդհանուր հետաքրքրության աճով, մասնավորապես՝ դարձվածք-մշակույթ կապի վերհանման արդիական միտումով: Դա էլ իր հերթին պայմանավորված է ազգերի միջմշակութային կապերի ու փոխազդեցությունների, քաղաքական ու տնտեսական փոխհարաբերությունների ակտիվացմամբ, որն էլ մշակութային ու քաղաքական գործիչներին մղում է՝ լավ ճանաչել գործընկերներին, նրանց ազգային հոգեկերտվածքն ու պատմամշակութային անցյալը, և որը լավագույնս դրսևորված է դարձվածքների մեջ: Մյուս կարևոր, այսօրվա առումով արդիական պահանջն է՝ բավարարել օրավուր աճող հետաքրքրությունները այլ լեզվամշակույթների նկատմամբ, կատարել առավել լիակատար թարգմանություններ՝ վեր հանելով թիրախ լեզվում և, մասնավորապես, դարձվածքներում ամփոփված ազգամշակութային ողջ տեղեկույթը:

Աշխատանքի բուն **նպատակը** դարձվածքների ծագման լեզվական, կրոնածիսական ու արտալեզվական այլ գործոնների մատնանշումն է ու ցուցադրումը, այդ ամենի հիմնավորումը կոնկրետ զուգադրական դարձվածքային օրինակներով, որոնք անդրադարձնում են հնագույն ծեսը, հավատալիքը կամ արձագանքում աստվածաշնչյան մարդաբանական-արքետիպային պատկերացումներին: Մյուս կողմից՝ նպատակ է դրվում այդ ամենը ցույց տալ ու բնորոշել իրենց հետագա լեզվամշակութային զարգացումներում ու գեղարվեստական դրսևորումներում, մասնավորապես՝ Շեքսպիրի <<Համլետ>> դրամայում, (ինչպես բնագրում, այնպես էլ հայերեն թարգմանությունում):

Այդ նպատակը իրականացնելու համար աշխատանքում առաջադրվել են հետևյալ առաջնահերթ խնդիրները.

1) ներկայումս ակտիվ գիտական շրջանառության մեջ գտնվող տեսական աշխատությունների լույսի ներքո բնութագրել դարձվածք հասկացության իմաստային ընդգրկման սահմանները՝ իր **լայն** և **նեղ** ընկալումներով հանդերձ:
2) բնորոշել կազմախոսական դարձվածքները և դրանց լեզվաոճական յուրահատկությունները:

3) վեր հանել դարձվածքների, մասնավորապես՝ կազմախոսական դարձվածքների ծագման ու կազմավորման հնագույն ակունքները՝ նախնադարյան առասպելական շրջանից եկող մարդաբանական ու պանթեիստական պատկերացումները, հավատալիքները, ծեսերը, դրանցում առկա անիմիզմի արտահայտությունները:
4) դրանք համեմատել-զուգադրել աստվածաշնչյան-արքետիպային տարբերակների և կրոնածիսական համակարգի հետ. երևան բերել այն ընդհանուրն ու առանձնահատուկը, որոնք լեզվառճական իրենց դրսևորումներն են գտել աստվածաշնչյան կազմախոսական մի շարք դարձվածքների մեջ:
5) կոնկրետ օրինակների հիման վրա ցույց տալ վերոնշյալ պատկերացումները, ծիսակատարումները և արտալեզվական, պատմամշակութային մի շարք այլ գործոններ արտացոլող դարձվածքները՝ հիմնվելով ազգագրական, դիցաբանական ու աստվածաշնչյան ուսումնասիրությունների, ինչպես նաև բուն Աստվածաշնչի վրա:
6) անհրաժեշտության դեպքում զուգադրել և համեմատել քննվող օրինակների անգլերեն ու հայերեն տարբերակները՝ ցույց տալու համար ինչպես դրանց ընդհանուր-տիպաբանական գծերը և արքետիպային նույն աղբյուրներից եկող ընդհանրությունները, այնպես էլ ազգամշակութային առանձնահատկությունները՝ տեղայնացման, ազգայնացման և մյուս այլ գործոնների ազդեցությամբ:
7) այս համատեքստում կարևորել հատկապես կազմախոսական բնույթի դարձվածքները, որպես հնագույն մարդաբանական պատկերացումների ու գիտելիքների, ինչպես նաև ազգալեզվամշակութային կյանքի արտահայտությունների լեզվառճական խտացումներ:
8) բացահայտել, որ դարձվածքներն ընդհանրապես, և կազմախոսական դարձվածքները՝ մասնավորապես, ժամանակի ոգուն և գիտությունների զարգացմանը համընթաց, հետզհետե <<թոթափել>> են իրենց նախնադարյան-կրոնածիսական բովանդակությունը՝ կրոնածիսականից անցում կատարելով առավելապես դեպի գաղափարագեղագիտական ու խորհրդանշանային մակարդակներ՝ ձեռք բերելով, այսպես ասած, <<արտաքին-ցուցադրական>> բնույթ:
9) փաստական նյութի վերլուծությամբ բացահայտել խորհրդանշական բնութագրում կամ հեգնանք արտահայտող դարձվածաբանական միավորները, որոնք գեղարվեստական խոսքում՝ հաճախ ի հայտ են գալիս որպես գրողի կամ ժամանակաշրջանի գաղափարագեղագիտական հայեցակերպի խորհրդանշաններ:

Հետազոտության գիտական **նորույթն** այն է, որ ամենից առաջ, կազմախոսական ԴՄ-ները քննարկվում են իրենց ծագման, կազմավորման փուլում: Փորձ է արվում վեր հանել նախնական հավատալիքների, ծեսերի և աստվածաշնչյան մարդաբանական պատկերացումների ու խորհրդակատարությունների արտացոլումները արքետիպի նշանակություն ունեցող կազմախոսական դարձվածքներում: Այնուհետև ցույց են տրվում տալ դրանց հետագա դրսևորումներն ու փոխակերպման աստիճանները գեղարվեստական խոսքում, կոնկրետ՝ Շեքսպիրի <<Համլետում>>: Քննարկումների արդյունքում որպես նո-

րույթ արձանագրվում է, որ արքետիպային ԴՄ-ները, գեղարվեստորեն կիրարկվելիս, զգալիորեն հեռանում են իրենց նախնական նշանակություններից և օժտվում նոր առնշանակություններով, ստանձնում գեղագիտական ու գաղափարական այլևայլ գործառույթներ, իսկ թարգմանության ընթացքում հագեցվում նաև <<ազգային իմաստավորումներով>>: Աշխատանքում նորույթ են նաև ԴՄ-ների սկզբնատիպերի և դրանց շեքսպիրյան որոշ յուրօրինակ կիրառումների՝ <<շեքսպիրիզմների>> զուգադրումները:

Հետազոտության համար, **մեթոդաբանական** առումով, հիմնարար նշանակություն են ունեցել բանասիրական հերմենևտիկայի, դարձվածաբանության, ազգապատմա-լեզվամշակութային, ազգագրական, կրոնագիտական, ծիսագիտական ոլորտների նվաճումները, ինչպես նաև արդի շրջանում տարածվող համեմատաբար նոր ուղղության՝ զուգադրական ոճաբանության ձեռքբերումներն ու դարձվածքների ուսումնասիրումը լեզվաոճական և լեզվաբանաստեղծական վերլուծության մեթոդներ:

Հետազոտության հիմնական **նյութը** քաղված է ազգագրական (Ջ.Ջ,Ֆրեզեր, Է. Բ. Թայլոր), առասպելագիտական, բանահյուսական ու գիտական ուսումնասիրություններից, Աստվածաշնչից, մեկնողական և դարձվածաբանական տարբեր բառարաններց, Շեքսպիրի դրամաներից, մասնավորապես՝ <<Համլետ>> դրամայից:

Հետազոտության մեջ առկա դիտարկումներն ու կրոն-մշակույթ-լեզու-կազմախոսական դարձվածքներ շղթայի յուրաքանչյուր օղակի դերի ու նշանակության վերաբերյալ պարզաբանումները կարող են օժանդակել դարձվածք, կազմախոսական դարձվածք հասկացության հիմնարար և համակողմանի ընկալմանը, այն առանցքային դրույթի հիմնավորմանը, որ դարձվածքն ինքը ոճ է, իսկ ոճը՝ դիտակետ կյանքի և իրականության նկատմամբ: Նշյալ բնագավառների փոխհամագործակցության և դրանց միջև եղած պատճառակցական կապերի բացահայտումները ինքնին **տեսական** կարևոր նշանակություն ունեն կազմախոսական ԴՄ-ների առանձնահատկությունների վերհանման և բնութագրման առումով: Հետազոտության տեսական նշանակությունը այն է, որ տվյալ ուսումնասիրությունը կարող է նպաստել դարձվածային միավորների և հատկապես կազմախոսական ԴՄ-ների համակողմանի ընկալմանը և համարժեք թարգմանության հետ կապված խնդիրների պարզաբանմանը:

Գործնական առումով հետազոտության լայն ընդգրկումը՝ նախնադարյան հավատալիքներից մինչև գրական-գեղարվեստական ստեղծագործություններ, կազմախոսական ԴՄ-ների փոխակերպման ընթացքի նկարագրումը՝ մարդաբանական ու կրոնածիսական պատկերացումներից անցումը գեղագիտական ու խորհրդանշանային գործընթացի, - այս ամենը կարող են օգտակար լինել ինչպես դարձվածաբանին ու ոճաբանին, այնպես էլ ազգագրագետին, կրոնագետին, թարգմանչին, մշակութաբանին և, առհասարակ, լեզվամշակութային հարցերով զբաղվողներին: Հետազոտության արդյունքները կարող են կիրառվել ԲՈՒՀ-երում՝ հայերենի ու անգլերենի դասավանդման ու ուսուցման գործընթացում ինչպես նաև գեղարվեստական լեզվաոճը և շեքսպիրյան կազմախոսական դարձվածքները ուսումնասիրելիս:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, որոնք ըստ անհրաժեշտության բաժանվում են ենթագլուխների, ծանոթագրություններից, եզրակացությունից և գրականության ցանկից:

Ներածության մեջ ներկայացվել են հետազոտության թեման, նորույթն ու արդիական նշանակությունը, հիմնահարցերը, նպատակներն ու խնդիրները: Հիմնավորվել է ուսումնասիրության մեթոդաբանական հիմքը, տեսական ու գործնական արժեքը:

Առաջին գլխում (<<Դարձվածքներն իբրև նախնական հավատալիքների և ծիսական արարողությունների լեզվառճական դրսևորումներ. կազմախոսական ԴՄ-ներն այս համատեքստում>>) դարձվածքները բնորոշվել են որպես առասպելական պատկերացումների, կրոնածիսական և մշակութային կյանքի առանձնահատուկ խտացումներ[3]: Տարաբնույթ ԴՄ-ների շարքում, ժամանակային առումով, ամենանախնականը առասպելաբանական բնույթի ԴՄ-ներն են[4], օրինակի համար, <<աքիլեսյան գարշապար>> կամ <<արգոսյան աչքեր>> մակդրավորումներով կազմված դարձվածքները[5], ինչպես նաև առասպելաբանական հասկացույթները՝ իրենց ամրակցված մակդիրների կամ անունների հետ՝ Պրիբատա (=Հովանավոր) Ֆորտունա, Վիկտրիս (Հաղթանակ) և այլն, որոնցով կազմվել են տարատեսակ դարձվածքներ[6]: ԴՄ-ներն, այս առումով, իրենց մեջ պահպանում են հնագույն տեղեկատվություն: Դրանք, իրենց այդ <<կուտակողական>>, <<հիշեցնող>> գործառույթով կապող օղակ են հանդիսանում սերունդների միջև[7], հետազոտողին մղում դեպի ժողովրդի վաղնջական անցյալը, ի ցույց դնում հնագույն մշակութային ավանդույթների փոխանցելիության փաստը:

Հետազոտողները, անդրադառնալով ԴՄ-ների ստուգաբանության հարցերին, նշում են բանասիրական համալիր քննության անհրաժեշտությունը, նշում լեզվի, մշակույթի, պատմության, ազգագրության, հոգեբանության, բանագիտության, գրականագիտության, արվեստաբանության և այլ գիտությունների տվյալների առկայությունը ԴՄ-ներում, որով և փաստարկվում է նման ստուգաբանական հետազոտության միջգիտակարգային բնույթը և որոշարկվում հարցերի շրջանակը՝ իրականության ո՞ր երևույթի հիման վրա է ձևավորվել դարձվածքը, ո՞ր հեղինակն է առաջինն օգտագործել այն և ինչ մեկնակերպով, կյանքի ո՞ր բնագավառից կամ ո՞ր լեզվից է այն հայտնվել տվյալ լեզվում և այլն[8]: Նշյալ բնագավառների մեջ հատկապես կարևոր է մարդաբանությունը և մարդաբանական պատկերացումների ոլորտը. ո՞վ է մարդը, որպես ստեղծվածք, որպես արարչագործության արգասիք, նա ի՞նչ առաքելություն ունի, ինչպիսի՞ն է

[3] Фразеология в контексте культуры (ред. В. И. Телия). М., Языки русской культуры, 1996.

[4] Аспекты Мифа М., 1995.

[5] Ղազարյան Հ. Ջ. Մարմնի մասերի անվանումներով հայերեն-ռուսերեն-անգլերեն դարձվածքների բառարան, Ե., Հեղ. հրտ., 2010, էջ 11:

[6] Բոտվիննիկ Մ. Ն., Կոգան Մ. Ա. Դիցաբանական բառարան, Ե., Լույս, 1985:

[7] Եղիազարյան Գ. Ռ. Մարմնի մասերի անվանումներով կազմված դարձվածքները հայերենում և անգլերենում, թեկն. ատենախոս, Ե., 2005:

[8] Բեդիրյան Պ. Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Ե., Սովետական գրող, 1973:

մարդ արարածի կառուցվածքը, ինչպե՞ս են նրա մեջ փոխհարաբերակցվում հոգևոր և մարմնավոր ոլորտները և բազմաթիվ այլ հարցեր ու խնդիրներ, որոնք սերտ կապ ունեն մասնավորապես, կազմախոսական ԴՄ-ների առաջացման հետ:

Երկրորդ գլխում (<<Արքետիպային-աստվածաշնչյան կազմախոսական դարձվածքները և դրանց փոխակերպյալ կիրառումները) քննարկման նյութ են դառնում հնագույն հավատալիքների և աստվածաշնչյան լեզվամտածողության միջև եղած կապերը, որոնք ծնունդ են տվել բազմաթիվ՝ արքետիպային նշանակություն ունեցող ԴՄ-ների:

Աստվածաշնչի դարձվածքները, կարող են ենթարկվել լեզվաոճական վերլուծության՝ դրանց գեղարվեստական ու գեղագիտական յուրահատկությունները վեր հանելու նպատակով: Ինչպես գրում է Մ. Է. Կոնուրբաևը (որը փորձել է Աստվածաշունչը դիտարկել լեզվաբանաստեղծական վերլուծության եղանակով)՝ <<Սուրբ Գրքի հետազոտումն այսօր ընթանում է երեք ուղիներով>>[9]. նա այդ ուղիներն է համարում Սուրբ Գրքի հետազոտման պատմական, միսիոներական և լեզվաբանաստեղծական հայեցակերպերը: Ընդ որում՝ վերջինս իր մեջ միավորում է լեզվի ընկալման ու բնութագրման լեզվաբանական ու գրականագիտական հայեցակերպերը և կոչված է բացահայտելու լեզվի և պոետիկայի դիալեկտիկան, այլ խոսքով՝ տվյալ երկի (ստեղծագործության) և նրա լեզվաոճական որոշակի ձևերի միջև եղած փոխադարձ կապը: Դա, փիլիսոփայորեն ասած, ամբողջի և մասի կապն է, ըստ գեշտալտ հոգեբանության՝ մանրամասնությունների և ամբողջի փոխհարաբերությունը՝ ամբողջի (վերինի) թելադիր դիրքով:

Վերոնշյալ մակարդակների և հասկացման դաշտերի վերհանման ու բնութագրման առումով կարևոր են նաև սուրբգրային դարձվածքների զուգադրական համեմատությունները՝ դրանց անգլերեն ու հայերեն թարգմանությունները, որոնք նույն լեզվաոճական միջոցների (տվյալ դեպքում կազմախոսական դարձվածքների) տարբեր կամ մասնակիորեն համարժեք (երբեմն էլ ոչ համարժեք) անդրադարձումներն են:

Ասվածը ցույց տանք աստվածաշնչյան հետևյալ կազմախոսական դարձվածքի վերլուծության հիման վրա:

The fool hearth said in his heart,
There is no God.

(Psalms 14:1)

Անզգամն իր սրտի մէջ ասաց, թէ՝
Աստուած չկայ:

(Սաղմ. 14:1)

Այստեղ բուն կազմախոսական, մարդու մարմնի մասերից մեկի՝ սրտի հետ կապված դարձվածքն է՝ <<…said in his heart>> (<<…իր սրտի մէջ ասաց>>, որը կարող է ունենալ նաև իր տարբերակները՝ <<իր սրտում ասաց>> և այլն):

[9] Конурбаев М.Э. Библия короля Иакова в лингвопоэтическом освещении. М., Диалог-МГУ, 1998.

Որպեսզի ամբողջությամբ պարզ լինի, թե ինչու՛ է այստեղ սաղմոսերգուն կիրառել նշյալ դարձվածքը՝ կապված սրտի հետ, բավական չէ սոսկ լեզվառճական մեկուսացված վերլուծությունը: Հասկանալու համար դարձվածքի ողջ տարողանուկությունը և կապն առհասարակ աստվածաշնչյան լեզվամտածողության հետ, ընթերցողին հարկավոր է գիտելիքների որոշակի պաշար, տեղեկատվական լայն դաշտ: Մասնավորապես պետք է նկատի ունենալ, որ ըստ Աստվածաշնչի և ըստ մեկնողական գրականության (=աստվածաշնչյան հերմենևտիկայի) մարդ արարածի մարմնի մասերից կարևորագույնը սիրտն է, որ համարվում է մտածումների կենտրոնը կամ <<խորհուրդների դուռը>>՝ ըստ միջնադարյան մեկնիչների: Ընդ որում՝ նրանց մեկնությունները, այսպես ասած, մեկնարկում են բուն Աստվածաշնչից, որտեղ բազմիցս ակնարկվում է մարդու սիրտը 1) իբրև փրկության դուռ (եթե սիրտը մաքուր է), 2) իբրև դատապարտության դուռ (եթե սիրտը մաքուր չէ): Աստվածաշնչյան բազմաթիվ ասույթներից նշենք գոնե մի քանիսը. <<…heart shall rejoice in the salvation>>(Psalm 13:5), <<Իմ սիրտը քո փրկութիոնով պիտի ցնծայ>>, <<Thou hast proved mine heart; thou hast visited me in the night …>> (Psalm 17:3), <<Իմ սիրտը փորձեցիր, գիշեր ժամանակ քննեցիր>> (Սաղմ.17:3), <<The heart is deceitful above all things, and desperately wicked: who can know it?>> (Jeremiah 17:9), <<Սիրտն ամէն բանից աւելի խաբեբայ ու խիստ չար է, ո՞վ կարող է ճանաչել այն>> (Երեմիա 17:9), <<Blessed are the pure in heart: for they shall see God>> (Matthew 5:8) <<Երանի՜ նրանց որ սրտով մաքուր են, քանի որ նրանք պիտի տեսնեն Աստծուն>> (Մատթ.5:8), և այլն: Բերված օրինակները ցույց են տալիս, թե որքան կարևոր դեր է հատկացվում սրտին, որը կարող է մինչև անգամ Աստծուն տեսնելու արտոնություն շնորհել մարդուն (սուրբ սիրտ ունեցողին), կարող է նաև լինել <<խաբեբա ու չար>>: Ուստի վերոնշյալ դարձվածքը՝ <<Անզգամն իր սրտում ասաց>>, լիովին ճանաչելու և բնութագրելու համար հարկ է լավատեղյակ լինել մարդու սրտին վերաբերող մեկնություններին ու հորդորումներին՝ <<Երբ աղօթելիս լինես՝ սիրտդ ուղղիր վեր>>, <<ծածուկ աղօթիր քո սրտում և փակի՛ր սրտիդ դռները>> (Հակոբ Մծբնացի, +346), <<Պետք է, որ աղօթողի սիրտը ցրուած չ'լինի>> (Գրիգոր Տաթեւացի, +1409) և այլն[10]:

Վերլուծության լեզվառճական և լեզվաբանաստեղծական մեթոդների համադիր գործադրումը վեր է հանում դարձվածքի մեջ ամփոփված վերնշանային և վեր-վերնշանային իմաստները:

Այն ամենը, ինչ ասվեց <<սիրտ>> հասկացությամբ կազմված դարձվածքների կապակցությամբ, վերաբերում է նաև մարդու մարմնի մասերով կազմված մյուս կազմախոսական դարձվածքներին, որոնք ի դեպ, ինչպես նշում է Լ. Եզեկյանը՝<<իրենց արտահայտած իմաստներով աշխարհի մի շարք լեզուներում համընդհանուր են>>[11]:

---

[10] <<Աղոթագիրք>> ժող-ից, Ե., <<Վէմ>>, 2000

[11] Եզեկյան Լ., Հայոց լեզվի ոճագիտություն, Ե., ԵՊՀ 2003, էջ 130:

Բերենք կազմախոսական բնույթի դարձվածք, որտեղ առանցքը <<աչքն>> է, և որի այլաբանական-փոխաբերական կիրառմամբ բազմաթիվ դարձվածքներ կան թե՛ անգլերենում, թե՛ հայերենում:

<<Made a covenant with mine eyes; why then should I think upon a maid?>>.

(Job 31:1)

<<Աչքերիս հետ ուխտ արեցի. ուրեմն ինչպե՞ս մտածեմ կույսի վրա>>:

(Հոբ 31:1)

Ընդգծյալ դարձվածքում անգլերենի <<made>>-ը նշանակում է՝ արեցի, ավելի ստույգ՝ ի գործ դրեցի: Եթե թարգմանվի հայերեն, ապա կստանանք մոտավորապես՝ <<Աչքերիս հետ ուխտ արեցի>> կամ <<Աչքերիս հետ ուխտ ի գործ դրեցի>>: Ակնհայտ է, որ հայերենը և անգլերենը գրեթե նույնն են (թեև անգլերենի մեջ առկա են ի գործ դրեցի, գործեցի) իմաստները, որոնցից համեմատաբար <<ազատ>> է հայերենը: Հայերենում առավելապես <<ներկա>> է (կարելի է ասել՝ ներկա բացակայություն) <<կնքեցի>> իմաստը: Պատահական չէ, որ գրական արևելահայերենով այդպես էլ թարգմանված է.

<<Դաշինք կնքեցի աչքերիս հետ ես, ու չնայեցին նրանք մի կույսի>>:

(Հոբ 31:1)

Սամփսոնի մազերի պատմությունը Աստվածաշնչի ամենայուրահատուկ և խորհրդավոր պատմություններից է (Դատ. 13, 17), որտեղ մազը հանդես է գալիս որպես աստվածային ուժի և օրհնության աղբյուր: Մազի հետ կապված հավատալիքները տարածված են բազմաթիվ ժողովուրդների մոտ: Մազը համարվել է սուրբ, ուստի մոգարգելք է դրվել մազի վրա՝ արգելվել է այն պոկել կամ տալ ուրիշի, քանի որ ըստ շատ տոհմացեղային հավատալիքների, այն կարող է կախարդվել, իր վրա վերցնել չարամաղթությունը կամ հմայքը: Ջ.Ջ. Ֆրեզերը բերում է ուշագրավ փաստ. <<Գոսերի նեգրական ցեղում (Արմ.Աֆրիկա) կան քրմեր, որոնց գլխին ամբողջ կյանքում ածելի չի դիպել: Այդպիսի մարդու մեջ ապրող աստվածը մահվան սպառնալիքի տակ նրան արգելում է խուզել մազերը: Եթե մազերը շատ են երկարում, նրանց տերը պետք է աղոթի աստծուն, որ նա թույլ տա կտրել գոնե մազերի ծայրերը: Մազերը համարվում են աստծո կացարան…>>[12]:

Աստվածաշնչում ևս (ոչ միայն Դատավորներ գրքի՝ Սամփսոնին վերաբերող մասում, այլև այլ տեղերում, օրինակ, Ս. Պողոս առաքյալի՝ կորնթացիներին ուղղված առաջին ուղերձի II-րդ գլխում) մազը խորհրդաբանվում է իբրև աստվածայինի, առաքինականի և պատվականագույնի արտահայտություն: Մազը ելակետային հասկացույթ է աստվածաշնչյան շատ գրքերում, սաղմոսներում, Երգ երգոցում, մարգարեություններում, այլ տեղերում.

More in number than the hairs of my head
are those who hate me without cause;
mighty are those who would destroy me,
those who attack me with lies.

(Psalm 69:4)

---

[12] Ֆրեզեր Ջ.Ջ. Ոսկե ճյուղը, Ե., Հայաստան, 1989, էջ 279:

Գլխի մազերից շատ եղան նրանք,
ովքեր յանիրաւի ատում էին ինձ,
թշնամիներս և ինձ իզուր ատողները զօրացան ինձնից աւելի,
իմ չյափշտակած բաների համար ես վճարեցի նրանց>>

(Սաղմ. 68:5)

“Your hair is like a flock of goats.
moving down the slopes of Gilead”

(Song of Solomon 4:1)

<<Քո վարսերը նման են այծերի հօտերի,
Որոնք իջնում են Գաղաադից>>:

(Երգ երգոց, 4:1)

“Mary took a pound of costly ointment of pure nard
and anointed the feet of Jesus and wiped his feet with her hair;
and the house was filled with the fragrance of the ointment.” (John, 12:3)
<<Իսկ Մարիամը մի լիտր ազնիվ նարդոսի թանկարժեք իւղ վերցնելով՝
օծեց Յիսուսի ոտքերը. եւ իր մազերով էլ սրբում էր նրա ոտքերը.
եւ տունը լցուեց իւղի բուրմունքով>> (Հովh. 12:3):

Ինչու էր Մարիամը՝ Ղազարոսի և Մարթայի քույրը մազերով սրբում Յիսուսի ոտքերը: Դա բացատրելի է երկու հանգամանքով՝ Յիսուսի աստվածային սրբությամբ և երախտագետ Մարիամի խոնարհությամբ: Մարիամն ուզում է իր այդ վարմունքով ասել՝ Հիսուսի ոտքերը սուրբ են և միայն իր գլխի սրբությամբ՝ մազերով կարող է սրբել նրա ոտքերը, որովհետև սրբությանը կարելի է հպվել միայն սրբությամբ:

Առհասարակ, մազերը փռել, մազերով սրբել, մազերը (գլուխը) դնել ոտքի տակ՝ նշանակում է ծայրաստիճան սեր, հարգանք և խոնարհություն ցույց տալ, կարծես կամենալով ասել՝ տրորիր իմ գլուխը, անցի՛ր նրա վրայով, ես իմ մազերը, իմ սրբությունը փռում եմ քո ոտքերի տակ և այլն: Ընդ որում, մազերի սրբության այս պատկերացումը շատ հին է և հնարավոր չէ ասել, թե երբվանից է այն արմատավորվել ժողովուրդների մեջ:

Հարկ է նշել, որ աստվածաշնչյան լեզվամտածողությանը բնորոշ լեզվաոճական միջոցները, ի մասնավորի՝ կազմախոսական դարձվածքները, լայն տարածում են գտել տարալեզու քրիստոնյա (և նույնիսկ ոչ քրիստոնյա) ժողովուրդների լեզուներում: Դրանք դարձել են այդ լեզուների անկապտելի մասը, իրենցով պայմանավորել դրանց գաղափարագիտական ուղղվածությունը և զարգացման ու հարստացման ուղիները, թափանցել լեզվի ժողովրդախոսակցական շերտերի մեջ, ազդակ հանդիսացել տարալեզու գեղարվեստական գրականության զարգացման համար (ոչ միայն ողջ միջնադարում , այլև նոր և նորագույն ժամանակներում):

<u>**III գլխում (<<Աստվածաշնչյան կազմախոսական ԴՄ-ների շեքսպիրյան իմաստավորումները>>)**</u> բնութագրվել են նշյալ կազմախոսականների ձեռք բերած գաղափարագեղագիտական առնշանակությունները՝ երևան հանելով շեքսպիրյան կիրարկումների սերտ համագործակցումը ստեղծագործության (տվյալ դեպքում է <<Համլետ>> դրամայի) գլոբալ ուղղաձիգ համատեքստի հետ: Գլխում

շեքսպիրյան լեզվին հատուկ կազմախոսական ԴՄ-ները դիտարկվել են իբրև աստվածաշնչյան կազմախոսականների գեղարվեստական տարբերակներ՝ հաշվի առնելով լեզվի ու մշակույթի սերտ փոխհարաբերությունը[13], ինչպես նաև ազգամշակութային գործոնով պայմանավորված տարբերությունները՝ փորձելով առավել մեծ տեղ հատկացնել դարձվածքների հիմնանշանակային իմաստների ծագման կրոնադիցաբանական հիմքերին և այդ հիմքերը փաստարկող մարդաբանական պատկերացումներին:

Շեքսպիրյան դարձվածքների վկայակոչումները թույլ են տալիս դիտարկել արքետիպային-աստվածաշնչային կազմախոսականների <<շարժումը>> ժամանակի և տարածության մեջ՝ կրոնածիսական բնույթի աստիճանական թոթափումն ու նոր՝ առավելապես գաղափարական գեղագիտական ու ճանաչողական բնույթի ձեռքբերումը, որը և ցույց է տրվում բանասիրական համալիր հետազոտությամբ՝ լեզվաբանաստեղծական վերլուծական մեթոդի կիրառման շնորհիվ[14]:

Գեղարվեստական տեքստերում, պետք է ասել, փոխվում է մարդու ընկալումների առանցքը: Եթե սուրբ տեքստերում առանցքը աստվածակենտրոն ընկալումներն են, ապա վերածննդի շրջանում և նոր ու նորագույն ժամանակներում, կապված համընդհանուր աշխարհիկացման, տիեզերաբանական նորահայտ ընկալումների և գիտատեխնիկական զարգացումների հետ, ընկալման կենտրոնական առանցքն է դառնում մարդը (մարդակենտրոն ընկալումը), նրա հոգեկան տվայտանքներն ու սուբյեկտիվ ապրումները: Դրա հետ կապված՝ փոխվում է նաև լեզվամտածողության եղանակը, առհասարակ՝ լեզուն: Վերջինս դառնում է առավել ազատ, սկսում է արտահայտել մարդկային մտքի ու զգացմունքի ելևէջումները, երբեմն համաձայնելով աստվածաշնչյան դոգմաներին, երբեմն էլ հակադրվելով դրանց: Այս համընդհանուր գործընթացից դուրս չի մնում նաև Շեքսպիրը՝ դառնալով մարդակենտրոն տվայտանքների, ապրումների վառ արտահայտիչը, որի ակնառու վկայություններն են նրա դրամաները (<<Օթելլո>>, <<Համլետ>>, <<Մակբեթ>>, <<Լիր Արքա>> <<Ռոմեո և Ջուլիետ>>), կատակերգություններն ու սոնետները:

Լինելով <<մարդակենտրոն>> ապրումների արտահայտիչը՝ Շեքսպիրը, սակայն չի դադարում լինել ավանդութային, այսինքն՝ <<աստվածակենտրոն>> գաղափարների և սուրբ ճշմարտությունների կրողը: Նրա գործերում էական դեր են կատարում Աստվածաշնչով, քրիստոնեական վարդապետությամբ ավանդած հասկացույթները՝ Աստված, հրեշտակներ, առաքինություն, սեր, խղճմտանք, կեղծիք, սատանա, արդարություն, քավություն, փրկություն, հավատք և այլն, և այլն: Ավելին՝ շեքսպիրյան դրամաներում ծավալվող դրամատիկ հոգեվիճակներն

---

[13] Тарасов Е.Ф. Речевое воздействие в сфере массовой коммуникации. М., 1990, Crystal D. A. Investigating English Style. London, 1969.

[14] Akhmanova O., Zadornova V. On Linguopoetic Stratification of Literary Text // Poetica, Tokio, 1977, N 7; Задорнова В. Я. Словесно-художественное произведение на разных языках как предмет лингвопоэтического исследования, автопеф. дис. докт. филол. наук. М., 1992; Гаспарян С. К. Лингвопоэтика образного сравнения. Е. Лусакн, 2008.

ու գործողությունները, այսինքն՝ <<մարդակենտրոն>> ընկալման դրսևորումները հիմնականում պայմանավորվում են նրանով, թե մարդ արարածը, որպես հասարակական էակ, ի՛նչ դիրք է գրավում Աստծո և աստվածային սուրբ հասկացույթների նկատմամբ. ըստ այդմ էլ որոշվում է նրա վիճակն այս աշխարհում և նրա ճակատագիրը: Ասվածի ցայտուն օրինակն է Շեքսպիրի գլուխգործոցը՝ <<Համլետը>> և այնտեղ նկարագրվող քերովբեն: Եթե, օրինակի համար, Եզեկիելի մարգարեության մեջ քերովբեները նկարագրվում են իբրև քառակերպարան (չորս դեմք ունեցող), թևավոր, փայլակնաձև, առջևից և թիկունքից լիքն աչքերով և այլն (Եզեկիել 1), իսկ Հայտնության գրքում գրեթե նույն կերպ (Հայտն. 4:6-10), ապա Շեքսպիրի <<Համլետ>> դրամայում քերովբեն ավելի շուտ ամենատեսություն է խորհրդանշում, քանի որ աստվածաշնչյան քերովբեի հատկանիշներից ընտրվել է միայն մեկը՝ շատ աչքեր ունենալու = ամենատեսության հատկանիշը: Թագավորը, փորձելով կազմակերպել Համլետի մահը, իբր թե բարի միտումով ուզում է նրան ուղարկել Անգլիա: Նա Համլետին ասում է. <<Իսկապես լավ է, եթե գիտենաս մեր միտումները>> (“So is it, if thou knew’st our purposes”, Act IV, sc.III), որին ի պատասխան Համլետն ասում է. <<Ես տեսնում եմ մի քերովբե, որ տեսնում է ձեր դիտումները: - Բայց, եկ գնանք Անգլիա: - Մնաք բարով, սիրելի մայր>>: (I see a cherub that sees them. But, come; for England! – Farewell, dear mother, Act.IV, sc. III, p.231)՝ կամենալով ասել, որ ամենատես քերովբեները տեսնում են ամեն բան՝ նույնիսկ թաքնված որոգայթը: Այստեղ, ելնելով դրամայի բուն նպատակից, պետք չի եղել նույնությամբ վերարտադրել քերովբեի աստվածաշնչյան նկարագիրը, այլ <<քերովբե>> հասկացույթից վերցվել է միայն նրա բազմաչյա, այսինքն՝ ամենատես լինելու հատկանիշը, որի պատճառով էլ, քերովբեն՝ այդ կենդանի արարածը, ներկայացվում է իր հատկանիշներից մեկով՝ դառնալով ամենատեսության սիմվոլ:

Մեկ այլ տեղում աստվածաշնչյան-երկնային արարածների նկարագրությունից առանձնացվում է հրեշտակների՝ շնորհների սպասավորներ լինելու հանգամանքը, որով էլ <<հրեշտակները>> ձեռք են բերում խորհրդանիշի արժեք՝ դառնում օգնության խորհրդանիշ: Համլետը, իր հոր ուրվականին (երևումին) ի տես բացականչում է. <<Հրեշտակնե՜ր, շնորհի սպասավորներ, պաշտպանեցեք մեզ>> (Արար I,տեսարան IV, էջ 32): Անգլերեն բնագիրը՝ Angels and ministers of grace defend us! – (Act I, sc. IV, p. 177):

Ինչպես երևում է բերված օրինակներից, աստվածաշնչյան (և, առհասարակ՝ արքետիպային) հասկացույթները, դրանց ներքո հասկացվող առարկաները գեղարվեստական խոսքում կարող են հանդես գալ որոշակի հատույթով՝ կապված երկի ուղղաձիգ համատեքստի, բովանդակության և ձևի փոխհարաբերության հետ: Ինչպես Աստվածաշնչում են երեսը և լեզուն կարևորվում, որպես աղոթքի և կենաց աղբյուր, այնպես էլ Շեքսպիրի դրամաներում: Լեզվով ստելը, լեզուն ծռելը և <<այլ երես>> սարքելը համարվում է մեղք, ինչպես որ երևում է Համլետի՝ Օֆելիային ուղղված խոսքից.

> Hamlet.
>
> I have heard of your paintings too, well enough; God has given you one face, and you make yourselves another: you jig, you amble, and you lisp, and

nickname God's creatures, and make your wantonness your ignorance. Go to I'll no more on't; it hath made me mad. I say, we will have no more marriages: those that are married already, all but one, shall live; the rest shall keep as they are. To a nunnery, go.

(Act III, sc .I, p. 207)

Հայերեն թարգմանությունում կիրառվել են <<երես է տվել>>, <<երես եք շինում>>, <<լեզուներդ եք ծռում>> (<<լեզու ծռել>> դարձվածքի տարբերակներից մեկը) հարադիր բայերով կազմված ԴՄ-ները: Բոլոր դեպքերում թե՛ անգլերենը, թե՛ հայերենը օգտվել են նույն աստվածաշնչյան դարձվածակազմական արքետիպերից, որոնցում շատ են <<երես>> և <<լեզու>> հասկացույթներով կազմախոսական ԴՄ-ները: Մասեհյանական թարգմանությունը, կիրառելով հանդերձ հայկական լեզվամշակույթով ավանդած ձևերը, հարազատ և համարժեք է վերոբերյալ բնագրին.

Համլետ

Ձեր ներկարարության մասին էլ շատ եմ լսել, այո, շատ: Աստված ձեզ այլ երես է տվել, իսկ դուք ձեզ համար մի այլ երես եք շինում. օրորվում եք, շորորվում եք, լեզուներդ եք ծռում, աստծո արարածներին մականուններ եք կպցնում և ձեր լկտիությանը անգիտության երևույթ եք տալիս: Գնա, էլ չեմ ուզում այդ բաները տեսնել. դրանք ինձ խենթացրել են: Նրանք, որ արդեն ամուսնացած են, բացի մեկից, թող ապրեն մյուսները թող մնան, ինչպես կան: Մտիր կուսանոց:

(Արար III, տեսարան I, էջ 81)

<<Գլխին թափվել>>, <<գլխին գալ>>, <<ընկնել գլխին>> և նման այլ զուգորդումներով դարձվածքները բազմաթիվ են թե Աստվածաշնչում, թե Շեքսպիրի դրամաներում: Այսօրինակ դարձվածքներում, բնականաբար, առանցքային է <<գլուխը>>, մարդաբանական կառույցում գլխին հատկացված դերակատարումը. անհնարին է ասել, թե երբ է առաջացել այս կազմախոսական դարձվածքը՝ իր բոլոր նմանակներով հանդերձ: Միայն այն է հավանական, որ գլխի մասին պատկերացումները շատ հին են, հասնում են մինչև մարդկության պատմության վաղագույն շրջանները: Բայց որ այդ պատկերացումները ամրագրված են Աստվածաշնչում և ծառայում են որպես արքետիպեր՝ դա արդեն ակնհայտ փաստ է: Ողջ միջնադարյան գրականությունը իր հետագա ժանրային ճյուղավորումներով ու զարգացումներով շատ բան է վերցրել Սուրբ Գրքից՝ փորձելով ցույց տալ սուրբգրային դոգմաների շարժընթացը տարբեր հասարակություններում, ինչպես նաև դրանց արտահայտմանը կոչված լեզվամտածողական ձևերի զանազան դրսևորումները: Այդ դրսևորումներից մեկն էլ ավանդված արքետիպային լեզվամտածողական ձևերի, օրինակ՝ կազմախոսական դարձվածքների գեղարվեստականացումն է, դրանց նույնականության կամ փոխակերպման աստիճանը՝ լայն կամ մեծ ուղղաձիգ համատեքստի առկայության պարագայում: Շեքսպիրյան կազմախոսական դարձվածքները դրվում են դրամատիկ ժանրին հատուկ ձևերի մեջ, երբեմն էլ հանդես գալիս նոր ու հանկարծագյուտ մեկնաբանությամբ, ինչն էլ շեքսպիրագետները բնութագրում են իբրև <<շեքսպիրիզմներ>>, այսինքն՝ Շեքսպիրին հատուկ նոր ու եզակի արտահայտություններ: Նման մի <<շեքսպիրիզմ>> կարելի է համարել, օրինակ, Պոլոնիուսի կիրառած

կազմախոսական դարձվածքը, որով նա որդուն՝ Լաերտին հասկացնում է, որ նա պետք է ավելի շատ լսի, քան խոսի, լինի քչախոս և ոչ շաղակրատ (մի պատգամ որի սկզբնատիպարային տարբերակները շատ են հատկապես Սուրբ Գրքում, մասնավորապես՝ Սողոմոնի առակներում).

Polonius.

Give every man thine ear, but few thy voice …

(Act I, Sc. III, p.174)

…Ականջդ ամենքին, ձայնդ քչերին …

(Արար I, տես III, էջ 27)

Ուշագրավ է, որ հայերեն լեզվամշակույթում նշյալ դարձվածքը՝ (կարելի է ասել <<շեքսպիրիզմը>>), թարգմանչի՝ Հովհ. Մասեհյանի շնորհիվ, հայերեն է հնչում:

Եզրակացությունների մեջ ամփոփվում են ուսումնասիրության արդյունքները.

1) ի մի բերելով տեսական-դարձվածաբանական աշխատությունների արդյունքները՝ բնութագրվում են դարձվածք հասկացույթի իմաստային ընդգրկման սահմանները՝ իր լայն և նեղ ընկալումներով հանդերձ, ցույց է տրվել, որ հնուց ի վեր տիրապետող է եղել դարձվածքի լայն ընկալումը (օրինակ, ըստ Աստվածաշնչի): Արդի շրջանում ևս, դարձվածաբանական մտքի զարգացմանը համընթաց, զարգացում են ապրել նաև դարձվածքի ընկալման և՛ լայն, և՛ նեղ ընկալումները:
2) նախնական-նախնադարյան շրջանից ավանդած՝ առասպելաբանական-տիեզերածնական տարրերով հագեցած դարձվածքներում առկա են մարդու կազմախոսությանը՝ մարմնի մասերին (աչքեր, գլուխ, ճակատ, սիրտ, մազեր, ականջներ, ոսկորներ, բազուկ, գարշապար և այլն) վերաբերող հատուկ պատկերացումներ: Ազգագրական-ազգաբանական և դարձվածաբանական բնույթի աշխատությունները անդրադառնում են նաև հնագույն ավանդույթների, հավատալիքների առաջացման պատճառներին, մասնավորապես՝ անիմիզմի դրսևորումներին, որով, կարելի է ասել, բացատրվում են նախնադարյան մարդկանց՝ հնդկացիական, աֆրիկյան և այլ ցեղերի մեջ արմատավորված հավատալիքների, զոհաբերումների, վամպիրիզմի երևույթների, հոմեոպաթիկ նշանակություն ունեցող մի շարք գործողությունների պատճառները:
3) աստվածների, չար ու բարի ոգիների մասին պատկերացումները ծնունդ են տվել ոչ միայն մի շարք սովորույթների, ծեսերի, մոգական-կախարդական նշանակություն ունեցող գործողությունների, (մոգարգելք, լռության ուխտ, անձրևի հարուցման ու բերքի առատացման հետ կապված նմանակերպման գործողություններ և այլն), այլև դրանց արտացոլումը հանդիսացող կամ դրանց մասին վկայող բազմաթիվ ԴՄ-ների, իդիոմատիկ բնույթի ասույթների: Դրանցից շատերը, իբրև մոգականի դրսևորումներ, այսօր հասկանալի են դառնում ժամանակակից ընթերցողին, երբ հասկանալի են

դառնում դրանց ծնող պայմաններն ու պարագաները, բնությունը, կենդանիներին ու մարդու մարմնամասերին վերագրվող ոգեկանության մասին պատկերացումները (անիմիզմ):

4) լեզվառճական զուգադրումները ցույց են տալիս, որ հնագույն բազմաթիվ հավատալիքներ, պատկերացումներ ու մարդաբանական բնույթի գիտելիքներ, որոնք կազմախոսական դարձվածքների ձևավորման առանցքն են (զոհաբերումներ, քավության՝ ֆաղիտրայի, ուժի, անեծքի կամ անեծքի փոխանցման երևույթներ և այլն) հաճախ նույնն են թե՛ վաղնջական, թե՛ աստվածաշնչյան ավանդույթներում, որով էլ, հիմնականում, բացատրվում է կազմախոսական դարձվածքների նույնականությունը տարբեր լեզվամշակույթներում:

5) ԴՄ-ների համալիր դիտարկումները և հայերեն թարգմանությունները թույլ են տալիս հանգել այն եզրակացության, որ դարձվածքը որքան էլ համընդհանրական կամ նույնական լինի (մեծ մասամբ՝ նույն արքետիպային լեզվամտածողական կառույցներից սերած լինելու պատճառով), միևնույն է, տարբեր լեզվամշակույթներում ու տարբեր ազգերի մոտ այն ձեռք է բերում ազգային յուրատեսակ գունավորում՝ հանդես գալով տվյալ ազգի կամ տվյալ մշակութային հավաքականության, նրա հոգեբանության արտահայտիչ:

6) մեր ուսումնասիրությունը գալիս է հաստատելու, որ աստվածաշնչյան, մասնավորապես՝ կազմախոսական դարձվածքներում դրսևորվում են մարդու մարմնամասերի մասին սուրբգրային պատկերացումները և ընկալումները՝ գլուխը վերնական է, առաջնորդող, սիրտը՝ խորհուրդների, մտածումների և Աստծուն տեսնելու դուռը, ձեռքը կամ բազուկը՝ իշխանությունն է, գործունեությունը, աչքը՝ աստվածային տեսողությունը, ականջը՝ վերին պատգամը լսողը, անունը՝ սրբության, էության յուրատեսակ հնչումը կամ ծածկագրումն ու տարբերակումը, մազերը՝ աստվածային ուժն ու գեղեցկությունը և այլն:

7) դիտարկումները և զուգադրական վերլուծությունները վկայում են, որ այդօրինակ ԴՄ-ները, համընդհանուր իմաստավորումներով ու երբեմն էլ տեղային երանգավորումներով հանդես են եկել տարբեր լեզուներում, Աստվածաշնչում (հայերեն ու անգլերեն թարգմանություններում), ներթափանցել կյանքի և կրոնական ու գեղարվեստական գրականության մեջ՝ օժտվելով լեզվամշակութային նոր բնութագծերով՝ պայմանավորված ԴՄ-ների՝ առավել սուբյեկտիվ-անհատական և խորհրդանշանային գործոնների ուժգնացմամբ:

8) արքետիպի նշանակություն ունեցող այդ կազմախոսական ԴՄ-ները հիմնարար նշանակություն են ունեցել, օրինակ, Շեքսպիրի համար, որի դրամաներում և դրանց հայերեն թարգմանություններում (մասնավորապես՝ <<Համլետ>>-ում) դրանք կիրառվել են թե՛ բարոյաբանական, թե՛ գաղափարագեղագիտական որոշակի նկատառումներով՝ ի հայտ բերելով իմաստային որոշակի տատանումներ:

9) հատկանշական են հատկապես կազմախոսական բնույթի ԴՄ-ները, որոնք գրանցել են մարդու մարմնամասերի դերի ու նշանակության մասին հին

պատկերացումները, հաճախ դրանց վերագրելով միստիկ գործառույթներ. հանգամանք, որը թույլ է տալիս նման ԴՄ-ների միջոցով դիտարկել լեզու-առասպել կապի խնդիրը, առավել լայն ծիրի մեջ բնորոշել դարձվածքները։
10) շատ ժողովուրդների մոտ տարածված, տիպաբանորեն և դարձվածքային իմաստով նույնական կազմախոսական ԴՄ-ների համալիր ուսումնասիրությունները հաճախ ցույց են տալիս դրանց ծնող պատճառների, մասնավորապես՝ մարդաբանական ու պանթեիստական պատկերացումների ընդհանրականությունը կամ նույնականությունը՝ընդգծելով ստուգաբանական հետազոտությունների անհրաժեշտությունը՝ այդպիսով պայման ստեղծելով ԴՄ-ների տարաժամանակյա ուսումնասիրությունների համար՝ շեշտադրելով ԴՄ-ների սկզբնատիպային, փոխակերպված կամ նույնիսկ ձևաբեկված տարբերակների դրսևորումները տարբեր դարաշրջաններում և գեղարվեստական տարբեր ստեղծագործություններում։

Ատենախոսության հիմնախնդիրները քննարկվել են ԵՊՀ-ի համապատասխան ամբիոններում, տեսական սեմինարներում, ինչպես նաև արտացոլում են գտել հետևյալ հրատարակված հոդվածներում.

1. Մարդու մարմնամասերի և բույսերի անվանումներով աստվածաշնչյան լեզվաոճային միջոցների հայերեն-անգլերեն զուգադրություն // Համատեքստ – 2012, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2012

2. Դարձվածքների տեսակները. Աստվածաշնչյան որոշ սոմատիկ դարձվածքներ՝ անգլերեն և հայերեն թարգմանությամբ //Աստղիկ (22-23), Երևան, Սահակ Պարթև, 2012-2013։

3. Աստվածաշնչյան կազմախոսական ԴՄ-ների առանձնահատկությունները և դրանց հայերեն-անգլերեն տարբերակները // Կանթեղ, 2(55), Երևան, <<Աստղիկ հրատարակչություն>>, 2013

Armine Grigoryan

Biblical somatic phraseological units and their literary transformations

Summary

Among phraseological units somatic units are in great number and exist in various languages of the world. They have reached us both verbally and in written form through the texts comprising the Holy Bible or other literature. Pivotal and crucial in this research have been the archetypal forms of the somatic phraseological units and their transformations in time. The **topicality** of the research is conditioned by the increase of the trend to study phraseological units more profoundly. This in its turn is due to the activation of the cross-cultural ties among nations, their interdependence, revival of polilitical and economic relations urging the leaders in culture and in politics to have a better understanding of their partners' national edifice and historico-cultural past which is best embedded in phraseological units. Another important point is to meet the growing interest towards translations through which the whole cultural information stored in the source language and in phraseological units in particular is revealed.

The basic **purpose** of the research is to point out the linguistic, religious and other extralinguistic factors of the origin of phraseological units. At the same time an attempt is made to show all this in the linguistic and cultural developments, and in literature as well. Thus, reference is made to "Hamlet" by W. Shakespeare. A comparitive analysis with the Armenian language is carried out as well.

The **novelty** of the research is that the somatic phraseological units are discussed first in the phase of their origin and formation trying to show the reflections of ancient beliefs, rituals and biblical anthropological notions in the somatic phraseological units of archetypal importance. Then an attempt is made to show their further mannifestations and the degree of transformation in the literary language, in particular in "Hamlet" by Shakespeare. As a result the archetypal phraseological units used in literature move away from their original meanings to a considerable extent and acquire new connotations and in the process of translation they acquire "national colouring" as well.

The **methodology** of the research is based on the achievements of philological hermeneutics, phraseology, religion, contrastive stylistics which is a comparitively new direction in science as well as the method of linguopoetic analysis.

The **material** for the analysis is taken from ethnographic, mythological, folklore and other various dictionaries, from the dramas by Shakespeare, in particular "Hamlet".

From the **theoretical** point of view the work makes a contribution to the study of phraseological units in a wider context. Its results can be used in courses of lexicology and contrastive stylistics.

The **practical** value is the wide coverage from ancient beliefs until literary works, the description of the transformation process of the somatic phraseological units: transition from anthropological and religious-ritual notions to aesthetic and symbolic ones. All this may be useful not only to the specialist of phraseology or stylistics, but also the ethnographer, translator, culturologist, and generally those who are interested in the problems of linguoculture. The results of the research may be used in educational institutions while teaching English and Armenian as well as in courses of literary styles.

The work consists of an introduction, three chapters, a conclusion and a bibliography.

The **introduction** represents the subject matter, its topicality, and novelty, theoretical and practical significance of the research in the proposed field as well as the methods applied to the research.

Chapter one (Phraseological units as linguistic manifastations of early beliefs and rituals: somatic phraseological units in this context") deals with the concept that phraseological units are unique accumulations of the mythological, religious, ritual and cultural aspects of the society. Researchers highlight the necessity of a comprehensive philological examination as far as the etimology is concerned. They also mention the availability of the elements of culture, history, ethnography, psychology, art and other sciences in phraseological units, thus concluding that such an etimological investigation bears an interdisciplinary nature.

In the **second chapter "Archetypal-biblical somatic phraseological units and their transformation usage"** the ties between the earliest beliefs and the Bible are discussed which gave birth to numerous archetypal phraseological units. **The first sub-chapter "The general anthropological factor as a source of phraseological units"** deals with the anthropological factor, that is, the great background which broke to pieces but was preserved in various ethnic communities and passed from generation to generation as a special way of language thinking. The Biblical phraseological units like other phraseological units derived from other sources (mythology, religion, historico-cultural past) have been formed by means of metaphors, metonymies and other stylistic means and have a certain literary value. The biblical phraseological units can undergo linguostylistic and linguopoetic analyses to reveal their literary and aesthetic peculiarities. The contrastive translations (English and Armenian) reveal similarities and differences.

In the Second sub-chapter of chapter two **"Linguocultural translation versions of universal phraseological units and contrastive analysis"** the idea is highlighted that although somatic phraseological units are basically similar or universal, they bear certain distinguishing, unique elements due to ethnocultural and linguocultural differences. It should be noted that the biblical somatic phraseological units are widely spread in Christian and even non-Christian peoples' languages. They have become an inseperable part of those languages, direct their ideological tendency, and are means for development and enrichment.

In **Chapter three "Shakespearian usages of the biblical somatic phraseological units"** the acquired ideological and literary connotations have been discussed revealing a close link between Shakespearian usages and the global vertical context of the work, namely "Hamlet". The somatic phraseological units have been used by Shakespeare as literary versions of the biblical phraseological units taking into account the close relationship between the language and the culture. Reference to Shakespeare enables us to see the "transition" of archetypal-biblical somatic phraseological units in time and space: acquisition of new ideological, literary and cognitive colouring, drifting away from the religious-ritual element. This gradual transition is shown by using the lingopoetic method of analysis.

The conclusion presents the main findings of the research in detail.

Армине Григорян

Библейские соматические фразеологические единицы и их литературные трансформации

Резюме

Соматические единицы представляют особый пласт фразеологических единиц и многочисленны в разных языках мира. До нас они достигли как в устном, так и в письменном виде, через тексты, составляющие Библию, а также через художественную литературу разных языков..

Цель данного исследования – указать лингвистические, религиозные и другие экстралингвистические факторы, способствующие возникновению ФЕ. Делается попытка показать их дальнейшее развитие в художественной литературе. Проводится сопоставительный анализ драмы Шекспира "Гамлет".

Актуальность исследования заключается в более глубоком изучении ФЕ, так как, особенно в настоящее время, наблюдается активизация межкультурных отношений между странами, что и делает необходимым для политических деятелей лучше понять историко-культурное наследие своих партнёров, в значительной степени сохранившееся в ФЕ. Следует также отметить возрастающий интерес к переводческому аспекту данных единиц, через который выявляется вся культурная информация, содержащаяся в ФЕ.

Новизна исследования заключается в том, что соматические ФЕ рассматриваются с начала их возникновения и образования. Делается попытка показать отражение ранних вероисповеданий, ритуалов и библейских антропологических представлений в соматических ФЕ архетипной значимости. Далее анализируется их дальнейшие проявления и степень трансформации в литературном языке, в частности, в драме Шекспира "Гамлет". Как показывает исследование, применяясь таким образом, архетипные ФЕ, в значительной степени отходят от своих первоначальных значений и приобретают эстетические и идеологические коннотации. Между тем, в процессе перевода они приобретают также и национальную окраску.

Методологической основой данного исследования является использование достижений филологической герменевтики, фразеологии, религии, сопоставительной стилистики, а также метод лингвопоэтического анализа.

Материалом для анализа являются ФЕ, выбранные из этнографических, мифологических, фольклорных источников, из словарей, а также из драмы "Гамлет".

Теоретическая значимость заключается в том, что выбран широкий спектр изучаемого материала, с античных вероисповеданий до литературных произведений. Описание процесса трансформаций соматических ФЕ, перевод антропологических и религиозно-ритуальных представлений на эстетическое и символичное, в целом, выявляет ряд вопросов, тесно связанных с фразеологией, лингвостилистикой и линвокультурологией.

Практическая значимость работы заключается в том что данное исследование вносит значительный вклад в изучение ФЕ в более широком контексте. Результаты исследования могут быть полезны не только для фразеологов и стилистов, но также для этнографов, переводчиков, культорологов, и, в целом, для тех, кто интересуется проблемами лингвокультурологии.

Диссертация состоит из введения, трёх глав, заключения и библиографии.

Во **введении** обосновывается актуальность работы, отмечаются ее основные цели и задачи, возможности применения результатов исследования в теории и практике перевода.

В первой главе (“Фразеологические единицы как лингвистические проявления ранних вероисповеданий и ритуалов: соматические ФЕ в этом контексте”) рассматривается предположение о том, что ФЕ являются своеобразным резервуаром мифологических, религиозных, ритуальных и культурных проявлений общества. Исследователи подчеркивают необходимость проведения всестороннего филологического исследования относительно возникновения ФЕ, так как они содержат элементы культуры, истории, искусства, этнографии. Делается вывод, что подобное исследование носит междисциплинарный характер.

Вторая глава (“Архетипно-библейские соматические ФЕ и их трансформационные применения”) посвящена рассмотрению связей между ранними верами и Библией, в результате чего возникли многочисленные, архетипные ФЕ. **В первой подглаве (“Универсальные антропологические факторы как источник ФЕ”)** предметом изучения является предположение, что существовала “большая основа”, которая со временем развалилась. Тем не менее, её части сохранились в различных этнических общинах и передавались из поколения в поколение как особая форма языкового мышления. Библейские ФЕ, как и другие ФЕ, образованные из других источников (мифология, религия, историко-культурное прошлое), имеют основу метафоры, метонимии, а также другие стилистические средств и обладают определенной художественной значимостью. Библейские ФЕ подвергаются лингвостилистическому анализу с целью выявления их художественных и эстетических особенностей. Сопоставительный анализ перевода английских и армянских вариантов выявляет сходства и различия.

Вторая подглава второй главы **(“Лингвокультурные переводческие варианты и сопоставительный анализ универсальных ФЕ”)** посвящена рассмотрению вопроса о том, что, несмотря на то, что соматические ФЕ в основном схожи или универсальны, они имеют определённые отличительные элементы ввиду их этнокультурных и лингвокультурных различий. Следует отметить, что библейские соматические ФЕ широко распространены в языках христианских и не христианских народов и стали неотъемлемой частью этих языков, определяя их идеологическую направленность и являясь средством их развития и обогащения.

В третьей главе (“Шекспировские применения библейских соматических ФЕ”) анализируются приобретённые идеологические и художественные коннотации, выявляющие тесную связь шекспировских применений и глобального вертикального контекста всего произведения, в частности, драмы “Гамлет”. Соматические ФЕ были применены Шекспиром как литературные версии библейских ФЕ, принимая во внимание тесное взаимоотношение языка и культуры. Ссылка на Шекспира позволяет нам увидеть “движение” архетипных библейских соматических ФЕ во времени и пространстве, приобретение новой идеологической, культурной и познавательной окраски, отходя от религиозно-ритуального элемента. Этот постепенный переход показан методом лингвопоэтического анализа.

В заключении диссертации обобщены результаты проведенного исследования.